

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ**

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

**ՆԱԽԿԻՆՈՒՄ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԹԻՎ ԳԲՔԱ-ԱՄ-2019/40 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՈՂՈՔԸ
ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ՆՈՐ ԾԱԾԿԱԳԻՐ ՏԱԼՈՒ ԵՎ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ
ՍԿԶԲԻՑ ՍԿՍԼԵՈՒ ՄԱՍԻՆ**

Բողոքի ծածկագիրը և ամսաթիվը՝ ԳԲՔԱ-ԼՕ-2019/09, 17.04.2019թ.

Բողոքներողանձ՝ «Արվատեկ» ՍՊԸ

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

Ընթացակարգի ծածկագիրը՝ «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցում

Գնման առարկան՝ գրասենյակային նյութեր

Բողոքի պահանջը՝

Պարտավորեցնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարված «ՀՀՔԿ-ԳՀԱՊՁԲ-19/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

- 27.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝ «Արվատեկ» ՍՊԸ-ին 8-րդ, 12-րդ, և 13-րդ չափաբաժինների մասով հայտը մերժելու մասին որոշումը,

- 8-րդ, 12-րդ, և 13-րդ չափաբաժինների մասով «Մովսեսյան» ՍՊԸ-ին առաջին տեղ զբաղեցնող մասնակից և նույն չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները,

- գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. թիվ 3 որոշմամբ հաստատված /հրապարակված www.gnumner.am կայքում/ պայմանագիր կնքելու մասին որոշումը:

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ Լ. ՕՀԱՆՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ Ժ. ՂԱԼԹԱԽՉՅԱՆ

Նիստերին կարելի է առցանց հետևել <https://www.e-gov.am/gnumner/> հղումով.

Տեղեկացնում ենք, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի՝

- 50-րդ հոդվածի 10-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ, որի շահերը խախտվել են կամ կարող են խախտվել բողոքարկման հիմք ծառայած գործողությունների արդյունքում, իրավունք ունի մասնակցելու բողոքարկման ընթացակարգին՝ մինչև բողոքի վերաբերյալ որոշում ընդունելու ժամկետը գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացնելով համանման բողոք: Նույն հոդվածի համաձայն՝ բողոքարկման ընթացակարգին չմասնակցած անձը զրկվում է գնումների հետ կապված բողոքներ քննող անձին համանման բողոք ներկայացնելու իրավունքից,

- 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ նույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին

հասցե՝ ք. Երևան, Կոմիտաս 54 բ շենք

«Արվատեկ»

Բողոք բերող անձ՝ <<ԱՐՎԱՏԵԿ> ՍՊԸ-ից

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Պուսկինի 37/5

033-505-222
palitzaezevan@yahoo.com

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե

հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Կառավարական տուն 3

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝ <<ՀՀՔԿ-ԳՀԱՊԶԲ-19/1>>

ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ,

գրասենյակային նյութերի ձեռքբերում

ԲՈՂՈՔ

1. Բողոքի առարկան, փաստացի հիմքերը և ապացույցները.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի /այսուհետ նաև՝ Պատվիրատու/ կողմից գրասենյակային նյութերի ձեռքբերման նպատակով հայտարարվել է <<ՀՀՔԿ-ԳՀԱՊԶԲ-19/1>> ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/:

Ընթացակարգին մասնակցելու նպատակով ի թիվս այլ կազմակերպությունների 14.03.2019թ. հայտ է ներկայացրել նաև <<Արվատեկ>> ՍՊԸ-ն /այսուհետ նաև Ընկերություն/:

<<Արվատեկ>> ՍՊԸ-ի թիվ 4 հավելվածով՝ գնային առաջարկով հայտ է ներկայացրել թիվ 8-րդ, 9-րդ, 12-րդ, 13-րդ և 14-րդ չաճաբաժինների մասով, որից ամենաբարձր առաջարկը կազմել է 36 000 ՀՀ դրամ:

Հայտերի բացումը տեղի է ունեցել 14.03.2019թ. ժամը 11:30-ին:

Սակայն Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 19.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 2 արձանագրության 2.1 կետի համաձայն՝ 8-րդ, 12-րդ և 13-րդ

ՀՀ ԳՆԱՆՈՒՄԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄԱՍԻՆԱԿԱՆ

Ճ-13786

29 03 19

չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից է ճանաչվել <<Արվատեկ>> ՍՊԸ-ն, որոնցից ամենաբարձր գինը կազմել է 36 000 ՀՀ դրամ:

Նույն արձանագրության համաձայն՝ հանձնաժողովը որոշել է 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների մասով հարցում ներկայացնել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի /այսուհետ նաև՝ Կոմիտե/ հայտը ներկայացնելու որվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների առկայության վերաբերյալ:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 27.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության 1.1 կետի համաձայն՝ Կոմիտեի կողմից տրված եզրակացության համաձայն Ընկերությունը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի 1000 ՀՀ դրամ ժամկետանց հարկային պարտավորություն, որը գերազանցում է Օրենքի 6-րդ հոդվածով նախատեսված շեմը:

Վերոգրյալով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է մերժել Ընկերության հայտը:

Նույն արձանագրության 1.1.2-րդ կետի համաձայն՝ որոշում է կայացվել 8-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով 1-ին տեղ զբաղեցնող մասնակից ճանաչել <<Սոլսեյան>> ՍՊԸ-ին, իսկ 3.1 կետի համաձայն՝ նույն չափաբաժինների մասով ճանաչել է ընտրված մասնակից:

www.gnumner.am կայքում ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմի հրապարակվել է <<ՀՀՔԿ-ԳՀԱՊԶԲ-19/1>> ծածկագրով պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը և սահմանվել է անգործության ժամկետ մինչև 02.04.2019թ.:

2. Բողոքի իրավական հիմքերը.

<<Գնումների մասին>> ՀՀ օրենքի /այսուհետ նաև՝ Օրենք/ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած *գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիստուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը* գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի (այսուհետ նաև՝ կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի

համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը՝ էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի՝ անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «Ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա

ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Սույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի բողոքարկելու պատվիրատուի, գնահատող հանձնաժողովի և գնումների բողոքարկման խորհրդի գործողությունները (անգործությունը) և որոշումները:

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ յուրաքանչյուր անձ իրավունք ունի սույն օրենքի համաձայն նախքան պայմանագրի կնքումը բողոքարկելու պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունները (անգործությունը) և որոշումները գնումների բողոքարկման խորհրդին:

Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ եթե բողոքը ներկայացրած անձը բողոքարկում է պայմանագիր կնքելու որոշումը, ապա բողոքը ներկայացվում է սույն օրենքի 10-րդ հոդվածով նախատեսված անգործության ժամանակահատվածում:

Օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ խորհուրդը իրավունք ունի պատվիրատուի և գնահատող հանձնաժողովի գործողությունների կամ անգործության վերաբերյալ ընդունելու հետևյալ որոշումները.

- ա. արգելելու կատարել որոշակի գործողություններ և ընդունել որոշումներ,
- բ. պարտավորեցնելու ընդունել համապատասխան որոշումներ, ներառյալ՝ չկայացած հայտարարելու գնման ընթացակարգը, բացառությամբ պայմանագիրը անվավեր ճանաչելու մասին որոշման,

Նույն հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ բողոքի քննությունը բաց է հանդիսանալու համար, բացառությամբ պետական գաղտնիք պարունակող գնումների: Բողոքն ստանալու օրվանից

հաշված՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում, այդ մասին խորհուրդը հայտարարություն է հրապարակում տեղեկագրում:

Օրենքի 51-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ Գնումների բողոքարկման խորհուրդ ներկայացված բողոքն ինքնաբերաբար կասեցնում է գնման գործընթացը՝ սույն օրենքի 50-րդ հոդվածի 9-րդ մասով նախատեսված հայտարարությունը հրապարակվելու օրվանից մինչև բողոքարկման վերաբերյալ ընդունված որոշման՝ տեղեկագրում հրապարակման օրը ներառյալ:

3. Բողոքի վերլուծությունը և պահանջը.

Այսպիսով, ցանկանում ենք նշել, որ Ընկերության մոտ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց հարկային պարտավորությունը առաջացել է <<ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին>> ՀՀ օրենքի համաձայն՝ վճարման ենթակա դրոշմանիշային վճարների գծով:

Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2018թ. ապրիլի 11-ի թիվ 245-Ա հրամանով սահմանված հավելվածի՝ հարկ վճարողի անձնական հաշվի քարտի 14.03.2019թ. /հայտը ներկայացնելու օրվա/ դրությամբ <<Արվատեկ>> ՍՊԸ-ի հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորությունների, դեբետային գումարների, սահմանված չափից ավել վճարված գումարների, միասնական հաշվում առկա գումարների, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա տեղեկությունների հիման վրա պաշտոնական քաղվածքի /այսուհետ նաև՝ Քաղվածք/ համաձայն՝ Ընկերությունը ընդհանրապես չունի ժամկետանց հարկային պարտավորություններ, այլ ունի եկամտային հարկի գծով՝ 10 877 ՀՀ դրամի չափով վճարման ենթակա գումար, սակայն այն ժամկետանց չլինելու պատճառով չի արձանագրվել և չի ուղարկվել եզրակացության մեջ, քանի որ նշված հարկատեսակի համար նախատեսված է վճար՝ մինչև յուրաքանչյուր ամսի 20-ը:

Ընկերությունը հիմք ընդունելով վերոնշյալ պաշտոնական Քաղվածքից վերցված տվյալները և համոզված լինելով, որ <<Արվատեկ>> ՍՊԸ-ի հարկային պարտավորությունների չափը չի գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, հայտ է ներկայացրել և մասնակցել է Ընթացակարգին:

Սակայն, ի գարմանս Ընկերության, պարզվել է, որ <<Արվատեկ>> ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի ժամկետանց պարտավորություններ:

Ցանկանում ենք նշել, որ դրոշմանիշային վճարի մասով Քաղվածքի մեջ որևէ նշում չկար և Ընկերությունը չէր կարող տեղեկանալ կամ կանխատեսել, որ դրոշմանիշային վճարը հանդիսանում է հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ, այսինքն այս դեպքում առկա է իրազեկման խնդիր, որպեսզի մրցույթի մասնակիցները տեղեկացված լինեին և կատարի համապատասխան վճարումները:

Բացի այդ, 2018թ. հունիսի 11-ի ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին թիվ 702-Լ որոշման 11-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն՝ կոմիտեի խնդիրներն են պետական հարկերի և վճարների վճարման նկատմամբ հսկողության իրականացումը: Հարկային օրենսգրքի 6-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված են ՀՀ-ում կիրառվող հարկատեսակները, որտեղ բացակայում է դրոշմանիշային գծով հարկատեսակը:

Նույն հոդվածի 2-րդ մասով սահմանված է, որ ՀՀ-ում չեն կարող սահմանվել այնպիսի հարկեր, որոնք նախատեսված չեն նույն հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերով:

Հարկային օրենսգրքի 7-րդ հոդվածի ամաձայն՝ ՀՀ-ում կիրառվում են պետական և տեղական վճարներ, որտեղ նույնպես բացակայում է դրոշմանիշային գծով վճարումները:

Հարկային օրենսգրքի 6-րդ և 7-րդ հոդվածները հստակ սահմանում են այն բոլոր հարկերի և վճարների տեսակները, որոնց նկատմամբ հսկողություն է իրականացվում հարկային մարմնի կողմից: Այսինքն այս պարագայում պարզ է դառնում, որ դրոշմանիշային վճարը հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ չէ:

Գտնում ենք, որ <<Արվատեկ>> ՍՊԸ-ն բավարարել է Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով սահմանված պահանջներին, քանի որ տվյալ դեպքում, Ընկերությունը թիվ <<ՀՀԲԿ-ԳՀԱՊԶԲ-19/1>> ծածկագրով ընթացակարգի արդյունքում՝ նվազագույն գնային առաջարկ ներկայացնելու պայմաններում ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից, սակայն Կոմիտեի կողմից տրված եզրակացության պատճառով զրկվել է պայմանագիր կնքելու հնարավորությունից, դրանով իսկ <<մեկուսացվելով>> պայմանագրի կողմ հանդիսանալուց:

Միաժամանակ ցանկանում ենք նշել, որ եթե անգամ <<Արվատեկ>> ՍՊԸ-ն ունեցել է 1000 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություններ, ինչն ամեն դեպքում միանշանակ հերքվում է, ապա այս պարագայում Ընկերության հարկային պարտավորության չափը չի

գերազանցում Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը, քանի որ
Ընկերության կողմից ներկայացված և հաղթած ամենամեծ չափաբաժնի գումարը կազմել է
36 000 ՀՀ դրամ և այս պարագայում գնահատող հանձնաժողովը պետք է հաշվի առներ այս
գումարը, այլ ոչ թե բոլոր հաղթող չափաբաժինների ընդհանուր գումարը:

Ելնելով վերոգրյալից՝ <<Արվատեկ>> ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող
անձին.

խնդրում է

Պարտավորեցնել ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից գրասենյակային նյութերի
ձեռքբերման նպատակով հայտարարված <<ՀՀՔԿ-ԳՀԱՊԶԲ-19/1>> ծածկագրով գնանշման
հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովին դադարեցնել.

- 27.03.2019թ. ժամը 11:00-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրությամբ կայացված՝
<<Արվատեկ>> ՍՊԸ-ին 8-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով հայտը մերժելու մասին
որոշումը,

- 8-րդ, 12-րդ և 13-րդ չափաբաժինների մասով <<Մովսեսյան>> ՍՊԸ-ին 1-ին տեղ
գրադեցնող մասնակից և նույն չափաբաժինների մասով ընտրված մասնակից ճանաչելու
մասին որոշումները,

- գնահատող հանձնաժողովի 2019 թվականի մարտի 27-ի թիվ 3 որոշմամբ
հաստատված /հրապարակված www.gnumner.am կայքում/ պայմանագիր կնքելու մասին
որոշումը:

Կից Ձեզ եմք ներկայացնում.

1. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի հարկ վճարողի անձնական հաշվի քարտի
քաղվածքի պատճենը.

2. Բողոքարկման վճարը կատարած լինելը հիմնավորող փաստաթղթի պատճենը:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով՝

<<Արվատեկ>> ՍՊԸ-ի տնօրեն՝

Վ. Հարությունյան

29.03.2019թ.

